Ա. ՏԱՐԻ ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 21 ԱՐԵԳ 4383 — Հ. Տ. 28 ՄԱՐՏ 1892

ՊԷԼԱՐԳ

LE DANUBE

ՀԱՆԴԷՍ ԵՕԹԵՂՕՐԵԱՅ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԹ ՕՐԵՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամէն երկրի համար տարեկան 12 ֆր. կամ 5 ռուպլի թղթադրամ։

Պարսկաստանի համար տարեկան 8 ֆր. կամ 3 ռուպլի թղթադրամ։

Փոստի ծախքը խմբագրութիւնս կը վճարէ։

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ծանուցման տողը 50 սանթիմ է։ Հայերէն Պուլկարերէն եւ Ֆռանսերէն լեզուով։

Խմբագրութեանս ղրկուած նամակ կամ գրութիւն ետ չ'տրուիր։

Նամակ եւ ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով։

M. S. TUTUNDJIEFF
Rédacteur du journal "TANOUP"
(BULGARIE) ROUSTCHOUK

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

ԵԱՇ 7 ՄԱՐՏ 1892

(Շաբաթակ-Ռիւն 14բդ Ռիւն և վերջ։)

Պ. Նամակագիրը կը գանգատի նաև թէ Հայերը կը դիմեն ուրիշ աղօթատեղիներ։ Այս ճշմարիտ է, սակայն չ'բացատրեր թէ ինչպէ՞ս կը դիմեն, կրօնափոխութեան կեսէ՞։ Եաշու մէջ Ռումէնները ունին երէք եկեղեցի, ուր որ ձայնաւոր երաժշտութիւն ունին, մանաւանդ Մայր Եկեղեցւոյ երաժշտութիւնը այնչա՞փ հռչակաւոր է որ ուրիշ երկիրներէ փափաքողներ ալ այս եկեղեցական երաժշտութիւնը լսելով, մեծ գնահատութիւն ըրին և գովասանօք խօսեցան, հոս ոչ միայն Հայը, այլ Հրէայք անգամ, մանաւանդ հանդիսաւոր օրերու, բազմութեամբ կ'երթան այս ախորժալի հրեշտակային ձայնաւոր երաժշտութիւնը լսելու։ Լատինացւոց եկեղեցին կայ քաղցրաձայն երաժշտութիւն և երգեհոն և Հրէից աղօթատունը նմանապէս ձայնաւոր ախորժալուր երաժշտութիւն մը դաշնակով յաւելցեալ։

Ամէն ազգեր իրարու աղօթատեղիները կ'յաճախեն մանաւանդ հանդիսաւոր օրերու, հարսանեաց և թաղման հանդէսներու։ Զատկի և Ծննդեան ճրագալոյցի իրիկունները Ռումէնք կը տեսնուին Եաշու մեր եկեղեցւոյ մէջ Հայոց չափ հաւասար։ Ահա ինչ կերպով է որ Հայերը կը դիմեն ուրիշ աղօթատեղիներ Եաշու մէջ, և կարծեմ թէ ուրիշ տեղերն ալ միշտ այս կերպը պիտի ըլլայ. միթէ այս փոփոխակի այցելութիւններով է որ պիտի կորսուի Հայութիւնը Ռումանիոյ մէջ։ Սակայն պ. Մեղու ուրիշ աւելի ծանր պահանջք մ'ալ ունի, կ'ուզէ որ երիտասարդութիւնը Հայ մնալու համար, օտար ճիճուգիններ չ'յաճախէ։ Անկարելի բան։ Ասկէց ալ յայտնի է թէ պ. Մեղու տղոց տէր մարդ չէ որ այս ծնողական մեծ հոգն ալ տանի։ Պ. Մեղու մինակ կը հաստատէ թէ Հայերը քիչուր են և ցրուեալ կ'ապրին. 'ի հարկէ, ոմանք առուտուրով հեռացած են կենդրոններէ, ոմանք պաշտօնով, ոմանք ծառայութեամբ և մաս մ'ալ առանձին ագարակ կամ կալուած գնելով։ Ուրեմն քիչուր և ցրուեալ հասարակութիւն մը որ օրական դրամագլուխներով կապուած է միւս ազգաց ամէն բնակչաց հետ, կարելի՞է օտար ճիճուգիններ չ'յաճախէ ուսում և գիտութիւն ստանալու համար։ Հոս ալ օրինակ մը բերեմ։ Ցէրութեան վերի նահանգը, այսինքն Մոլատաւոյ մասը լեցուն է բազմութեամբ Հրէից։ Քաղաքներ կան որ բնակչաց ⅔ մասը Հրեայ են, աւաններ ալ կան, ուր որ հասարակաց պաշտօնեայներէն և աշխատաւորներէն զատ որ Ռումէն ազգէ են, ուրիշ գործով

զբաղած Քրիստոնեայ մը չ'տեսնուիր, ամբողջ կենդրոնները և շուկայները միայն Հրէից մէջ բռնուած են։ Թաղերու մէջ 100–200 տուն խիտ խիտ բնակութիւններ ունին, ուր որ Քրիստոնեայ մը անոնց կենդրոններու և թաղերու մէջ չ'կրնար թափանցիլ բնակութեամբ, բոլորովին անխառն և մեկուսի կ'ապրին ուրիշ ազգերէ, այնպէս որ Հրէան, Հրէայ կրնայ ծնանիլ, ապրիլ և մեռնիլ առանց որ Ռումաներէն գիտնայ բառ մը արտասանել. և այսու ամենայնիւ երկրիս հասարակայ նախակրթական դպրոցները լեցուն են վեց եօթը տարեկան հասակէն սկսեալ Հրէից երկու սեռէ ալ աշակերտներով որոնք շատ դպրոցներ աշակերտայ %ին 70ը իրենք կը համբեն, և դպրոցէն եղած ատենին այս աշակերտներ մեծ ուրախութեամբ փոխոյնելու վրայ Ռումաներէն կը խօսին մէկզմէկու հետ։ Ինչո՞ւ ծնողք իրենց զաւակները Քրիստոնէից նախակրթական դպրոցները կը ղրկեն ուսում և կրթութիւն ստանալու չե՞ն վախնար իրենք թէ Հրէութիւնը պիտի կորսուի, մանաւանդ որ շաբաթ օրուան սրբութեան դէմ ալ պատուիրանազանց կ'ըլլան, և բուն իսկ Քրիստոնէականն ալ կ'սովրին առանց դայթակղութեան, ինչո՞ւ, որպէսզի քաղաքացիութեան իրաւունքներ ստանալու արժանանան։

Պուքրէշի և Եաշու Հրէից ուսեալ և քաղաքակիրթ երիտասարդները, քանի մը տարիէ 'ի վեր սկսան մաքառիլ ծերոց մոլեռանդ սովորութիւններու դէմ և Ռումէնաց սովորութիւններու մօտենալ. — Ինչ՞ կ'ընեն Ռաբբիները։ — Անէծք կը կարդան ապօթատեղիներու մէջ քաղաքակրթութեամբ յառաջացեալներու դէմ։ Սակայն Ռումանիոյ Հայը անէծքէ ալ չ'վախնար, ինչպէս և ոչ ըսաւորեալ Հրէան։

Պ. Մեղու իր նամակը վերջացնելու մօտ, կ'ըսէ. «Մխիթարական է սակայն Ցեր խմբագիր, որ 'ի «Ռումանիա ունեցած յաճախակի ուղևորութեանս «առթիւ բախտ ունեցած եմ տեսակցիլ ազգայ«նոյ ոմանց հետ և գիտնալ իւրեանց փափաքը, «որ է անյապաղ ունենալ 'ի Ռումանիա մշանջե«նական այցելու հովիւ, որպէս երբեմն (ե՞րբ էր «այն երբեմն). կարգեալ 'ի Կ.Պոլսոյ Պատրիարքա«բանէ լեզուագէտ և Ռումանագէտ ևն։

Ինչպէս կ'երևի պ. Մեղու սկսած է արդէն նպաստակին հասնելու համար բանակցութիւններ ալ ընել, սակայն միայն երկու երէք փառասէր անձանց հաւանութեամբը Ռումանիոյ մէջ Հայոց Առաջնորդարան չ'կրնար տեղի ունենալ, թէև Կ.Պոլսոյ Պատրիարքարանէն ալ պաշտպան լինէր Առաջնորդարանի հաստատութիւնը, եթէ ամէն Հայ հասարակութիւնները համաձայն չլինին այս նիւթիւ վրայ։

1880 թուականէն ալ բարձրաստիճան եկեղեցական մը այս փորձն ըրաւ, բայց որովհետև Եաշու ամբողջ ժողովուրդը միաձայն և Պոթուշանի Հայոց մեծագոյն մասը մերժեցին առաջնորդութիւնը, Սրբազան Արքեպիսկոպոսն ալ ստիպուած եղաւ հրաժարիլ իր պաշտօնէն։ Իսկ այս անգամ ինչպէս կ'երևի խռովութեան պատճառը ուղղակի Պատրիարքարանէն պիտի ծագի, և հետևանքն անշուշտ միշտ նոյնն պիտի լինի ինչ որ 1880ին ալ եղաւ։

Արդ, նամակս վերջացնելով, կուգամ քանի մը խօսքով Ռումանիոյ մէջ Հայոց ունեցած այսօրուան կացութիւնն ալ ցուցունել համառօտիւ։

Ցղայութենէս 'ի վեր շատ փոփոխութիւններ տեսած եմ երկրիս մէջ ինչպէս Հայոց նոյնպէս և ամէն ազգաց նկատմամբ։ Հայոց դէմ եղած հին հալածանքները և ատելութիւններ դադրած են շատոնց, լուսաւորութիւնը մթութեան տեղը բռնելով և քաղաքակրթութիւնը մոլեռանդութեան յաղթելով, եղբայրութիւն և սէր տարածուեցաւ ամէն Քրիստոնեայ ազգաց մէջ, ուստի Ռումանիոյ Հայերը կրօնափոխութեան ոչ միտում ունին և ոչ ալ ստիպուած են, իրենք սիրով ազատ և համաձակ կը խոստովանին և կը պաշտեն իրենց ուղղափառ կրօնքը, ճշմարիտ հաւատով, առանց առաջնորդի մը դրդման հարկաւորութիւնը զգալու. Պատրիարքական կոնդակաւ եկած այցելուները մեծ պատուով ընդունած են ամէն տեղ։ Եւ Հայոց միայն այս պնդութիւնն է պատճառ որ Ռումէններէն ոմանք նախանձով կը գրեն թէ «Հայեր որ հինգ դարերէ 'ի վեր Ռումանիոյ մէջ հաստատուած են, դեռ չեն հաւասարած Ռումէնաց հետ կրօնքով և սովորութիւններով։» Իսկ ուրիշներն ալ գովասանքով կ'ըսեն թէ «Հայերը որ այսչափ դարերէ 'ի վեր եկած են Ռումանիոյ երկիրը, հաստատութեամբ կը պահեն իրենց ազգային սովորութիւններ և կրօնք»։ Արդ, եթէ մէկ քանի խնամութիւններ կը պատահին օտար Քրիստոնէից հետ, ասանք ալ Հայ ըլլալնին չեն մոռնար։ Ունիմք օրինակ Հայ մը որուն կինը Ռումէն է, բայց իր նորածին զաւակը Հայ քահանայի ձեռօք մկրտուեցաւ, նմանապէս երբ տեղւոյս եկե-

դեցւոյ նորոգութիւնը եղաւ, Հայ բարեպաշտ կանանց յանձնաժողովին գործակից անդամներէն մէկն եղաւ և Հայուհւոյ զգայմամբ աշխատեցաւ եկեղեցւոյ նորոգութեան ներքին զարդուց նպաստելու համար դրամ ժողովել։ Ունիմք Հայ կանայք որոնք Ռումենաց կամ Գերմանացւոյ հետ կ'ապրին օրինաւոր ամուսնութեամբ, բայց հոգեւոր պարտաւորութիւններին միշտ իրենց մայրենի եկեղեցին կը կատարեն ամենայն ջերմեռանդութեամբ։

Վերոյգրեալ բերած օրինակներուս վրայ հիմնելով, կ'եզրակացնեմ, թէ Հայերը Ռումանիոյ մէջ չեն կորսուիր այն մէկ քանի պատահական խառն ամուսնութիւններով, այլ երիտասարդայ ամենուին չ'ամուսնանալնուն պատճառաւ, թէ Ռումանիոյ մէջ Հայութիւնը կանգուն և անկսուտ պահելու համար մարդիկ չեն կրնար եկեղեցեաց շուրջը կենդրոնացեալ բնակիլ Առաջնորդը կամ քահանայն, անոնց կենակցութեան վրայ դիւրութեամբ հսկելու համար։ Թէ Հայերը Հայութեան սիրով որչափ ալ կապուած լինին, դարձեալ կարելի չէ ներկայ տղայութիւնը և ապագայ սերունդը քաղաքակրթութեան հոսանքէն ետ կեցնել և յառաջդիմութենէ արգիլել։ — Հայերը Ռումանիոյ մէջ միայն իրենց յառաջդիմութեամբն է որ բարձրը պաշտօններու և մինչև Համալսարանի Ուսումնարանութեան հասած են։ — Թէ այն Հայերը որոնք որ ստիպուած են պաշտօնով կամ ծառայութեամբ և կամ առուտուրով քաղաքաքենդրոններէ հեռաւոր տեղեր առանձին ապրիլ, զասանք ալ կարելի չէ իրենց հացէն և ապրուստէն զրկել Հայութիւնին պահելու համար։ Վերջապէս այսպիսի զարտուղի դէպքերը ընդհանուր կանոնի չեն կրնար վերածուիլ, ասոնք ամէն ազգաց մէջ կը գտնուին և առաջնորդի մը ձեռնհասութենէ վեր են։ Երկրիս մէջ Առաջնորդի մը ներկայութիւնը ոչ միայն անօգուտ է, այլ վնասակար այ է Հայոց համար, վասնզի Հայերը որ այսօր տեսնուած են իրը քաղաքացիք և հաւասարապէս կ'ուրախանան ամէն իրաւունքներէն որ օրէնքը քաղաքացիներուն կուտայ, եթէ կրօնից խորութեամբ, կրօնաւոր գլխոյ մը ներկայութիւնը ընդունին, այն ատեն դարձեալ տեղի պիտի տան հին ատելութեան, որ ժամանակէ մը 'ի վեր խաբանուած է։

Առաջնորդութեան դէմ այսչափ դիմադրութիւն ընելովս չ'կարծէ պ. Մեղու թէ օտար շահախնդրութենէ շարժեալ կը խօսիմ, ես Հայ եմ ծնած, Հայ կ'ապրիմ, Հայերէն կը խօսիմ և Հայ պիտի մեռնիմ։ Անցեալ տարի երբ տեսայ թէ Ռումէն եկեղեցականներէ ոմանք Հայոց կրօնքը նախատելու դեռաւորութեամբ սկսան այլ և այլ զրպարտութիւններ գրել Հայոց կրօնին դէմ, Հայկական զգայմամբ բռնկեալ բողոքեցի հերքեցի և ջրեցի այն չարակամ գրուածները, ինչպէս որ մօտերս ալ ունիմ նոր պատասխան մ'ալ հրատարակելու Հայոց մկրտութեան և պատարագի արարողութեան թարգմանութիւններովն հանդերձ։

Ռումանիոյ Հայոց կացութեան վրայ այս տեղեկութիւններ տալէս ետք կը խնդրեմ պ. Մեղու Նամակագիրը բարեհաճի շրջիլ մտածութեամբը Հնդկաստանի և Լեհաստանի Հայոց վրայ, և այժմ Ռուսաստանի և Տաճկաստանի Հայոց վիճակը աչքի առջև ունենալով, ուր որ մեր ամենաբարձր Սրբազան Առաջնորդները նստած են, տեսնէ թէ, ո՞ր կրօնաւոր են և կը կորսուին Հայերը։ Տեսնէ նմանապէս թէ այն կողմերն ալ Հայերը օտար անուններ ընդունած են, իրենց սուրբ աւազանի մը կրօնութեան անունները բոլորովին մոռնալով։

Իսկ եթէ կը գտնուի Ռումենական լեզուն գիտցող բարձրաստիճան եկեղեցական մը, այն որ Ռումանիոյ քաղցր օդին և ուրիշ հանգամանքներուն հաւնեցաւ, և կը ցանկայ միայն Առաջնորդարանի փառաւոր սրահներու մէջ փափուկ և հանգիստ կեանք անցնել, այս ուրիշ խնդիր է որուն ըսելիք չ'ունիմ։

Այսչափ միայն կը հարցնեմ թէ, ինչ՞ աղբիւրներէ պիտի հայթայթէ նաև Առաջնորդարանի վերաբերեալ "luxe,, ի տեսրդ ծախքերը և Առաջնորդի անձնական ռոճիկը, մինչդեռ Հայ հասարակութիւններ այսօր մեծ դժուարութեամբ հազիւ ամենահարկաւոր ծախքերը կրնան հայթայթել, եկեղեցիները լաւ վիճակի մէջ պահելու համար, և տեղ տեղ ալ և ոչ այսչափը չեն կրնար ըստ բաւականին հայթայթել։

Այս վերջի խնդիրս ալ 'ի նկատի առնելով, կը տեսնեմ թէ պ. Մեղուի Առաջնորդը կ'ուզէ նաև ծանր բեռ մ'ալ դրուիլ Ռումանիոյ Հայ հասարակութեանց վրայ անօգուտ։ Այսու ամենայնիւ, յուսով եմ թէ մեծ ընդդիմութիւն պիտի գտնէ գրեթէ ամէն տեղ և պիտի ստիպուի ետ քաշուիլ իւր երևակայեալ Առաջնորդական փառքէն։ [*]

Լ. ՍԲՄԱԴԱՇԵԱՆ
ԵԱՇՈՒ ՀԱՑՈՑ ՎԱՐԺԱՊԵՏ

---

[*] Մեր կարծիքը բոլորովին հակառակ է Մեծ. յոդուածագրին Առաջնորդի խնդրոյ մասին ըրած դիտողութիւններ, սակայն միայն կարող ենք ասել թէ, Պուլկա-

րիոյ եւ Ռումանիոյ Հայ գաղթականութեանցս համար անհրաժեշտ է ունենալ մի մշանջենաւոր առաջնորդ, հակառակ պարագային եթէ օգտակար ալ չ'լինի բաւական է որ փառք եւ պատիւ է մեզ համար, նամանաւանդ նորընտիր առաջնորդ Գեր. Գեւորգ, Ծ. Վարդապետ Երեցեանը՝ որոյ գործունէութիւնը եւ հեղահամբոյր բնաւորութիւնը մօտէն ծանօթ է ամենուս։ Ծան. Խմբ։

ՎԱՌՆԱ 20 ՄԱՐՏ. 1892

. . . . ԽՄԲԱԳԻՐ

Մարտ 7 թիւ թերթիդ մէջ հրատարակուած յոդուածս նոր սգհարութեան մը առիթ եղաւ սատ գործելու կամք ունեցող երիտասարդաց համար, և միևնոյն ատեն մի շատ տեղացի պարոններու ալ սրտմտութիւնը շարժեց, որք առանց հրապարակագրի մը պաշտօնը գնահատած ըլլալու լոկ կը զայրանան ու գինովցած գլուխներով յոդուածագրին նկատմամբ անլուր պառաւախօսութիւններ կ'ընեն, իսկ փոքր ինչ համեստ դասը «Ըէ ինչ-էն էրէր» խօսքովն կը բաւականանայ և 'ի չգոյէ օրինաւոր փաստերու իրենց ձօնուած յատկութիւններն մերժելու համար հրապարակ ելնալէ կ'զգուշանայ, բայց ես աւելի գոհ պիտի ըլլայի եթէ Կուտրենպերկեան հրապարակի վրայ դրչով զինեալ մի հակառակորդ տեսնէի, քանիէ Բագոսի երկրպագուաց խնկարկուներ, այսինքն (գինովներն առ կարծեցեալ յոդուածագիրն յարձակման դրդող անխոհեմ պարոններ։) Ուստի պարտ սնձին կը զգամ դոցա սա խորհուրդը տալ, թէ իմ նախորդ յոդուածն մերժելու համար իրենց միակ միջոցն է, նոր աշխուժիւ գործելու ձեռնարկել և միանալ նորակազմ «Եղբայրասիրաց Միութեան» Վառնայի որ իւր գոյութեան տակաւին առաջին ամսոյն մէջ կը գտնուի. և խարութիւն չ'ընել բնաւ թէ՝ նոյն Միութեան հիմնադիրք մեծաւ մասամբ ոչ բնիկ Վառնայի երիտասարդներ են. և վէճ չի յարուցանել անձնական կրից համար, այլ միանգամ ընդ միշտ պաշտպանել ինչ որ Միութեան շահն է։

Պ. Վ. Մ. երեք շաբաթ առաջ Վառնա հասնելով նախորդ տարուայ թատերական ընկերութենէ առած գոյքերն յանձնեց իւր տեղն, նաև 'ի փոխարինութեան նոյն գոյից յապաղման հաճեցաւ ընկերութեան նուիրել մի քանի ձեռք զգեստ իւր կողմէն, ըստ որում ցորչափ կարելի էր գոհացում տուաւ անգոհանակ սրտերու, 'ի բաց անտի այլ և այլ տեսակէտով իւր քաղաքս մականումը օգտակար եղաւ տեղւոյս երիտասարդութեան։

Ցեղւոյս «Եղբայրասիրաց Միութիւնը» որոյ նպատակն է ճոխ թանգարան մը և ընթերցարան հաստատել և պանդուխտ ու անկեալ ազգայնոց մատուցանել նպաստել։

Այժմ պատրաստութիւն կը տեսնայ ընկերութիւնը յառաջիկայ կիրակէ երեկոյ շքեղ ներկայացում մի տալ 'ի նպաստ Միութեան, եթէ խոչնդոտներ չի պատահին։

Երեք երեկոյ քաղաքս ժամանեց Արժ. Գէորգ Ծ. Վ. Երեցեան նորընտիր Առաջնորդն Պուլկարիոյ և Ռումանիոյ, նորին Արժանապատուութիւնը այս երեկոյ կը հրաւիրէ տեղւոյս ազգային վան ընտրութեան մի ներկայացուցչի ամենայն Հայոց Ս. Կաթողիկոսի ընտրութեան առթիւ, կարողութիւն և համբերատար ոգի կը մաղթեմ երեցեան հօր, որ կարենայ այս երկրաց տարաղբեալ և տարակարծիք զաւակներն հովուել։

ՎԱՀԱԳՆ

ՅՈՇԱՏԱԳԱՐԱՆ

ԳՈՄՍ ԷՄՄԱՆՈՒԷԼԻ ՕՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԹԵՐԹԵՐԻՑ

ՀԱՍԱՐԱԿԱԲԱՐ ԽՕՍՈՒԱԾՔ ԱԶԳԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

«Ազգութեան հաստատանը եւ լծակը է հասարակ ժողովուրդը։ Մի ազգ. թող որքան կամք։ Հարուստ լինի երեւելի մարդկերով, այսու ամենայնիւ այդ ազգի ազգութեան մեքենան շարժվում է հասարակ ժողովրդի վերայ, սա է այդ մեքենայի առանցքը, լծակը եւ հաստատանը։

Ազգի մէջ երեւցած մեծատունների, իշխանաւորների բարօրութիւնքը չեն կարող ասվիլ ազգային երջանկութիւն, եթէ մատնակից չէ դորան հասարակ ժողովուրդը։ Հասարակ ժողովրդի երջանկութիւնը պիտի երեւի նորա ընտանեկան եւ տնտեսական ապահովութեան մէջ. նորա խղճմտանքի եւ բանականութեան ազատութեան մէջ։ Մանաւոր մարդիկ, շատ անգամ, ոչ թէ միայն չեն կորուսել իւրեանց բարօրութիւնը, երբ նոցա ազգը ենթարկվել է մի թշուառ յեղափոխութեան, այլ մանաւանդ օգուտ են քաղել դորանից եւ առաւել ապահովել են իւրեանց բարեկենդանութիւնը։

Երբ եւ իցէ խօսելով ազգի վերայ, միշտ մեր աչքի առջեւ ունինք Հայոց հասարակ ժողովուրդը, եւ ազգ ասելով չենք իմանում այն մի քանի մարդիկը, որ արծաթի սանդուղով վեր էին բարձրացել ազգի մակերեւոյթից այլ այն խեղճ եւ կարեկցութեան արժանի ժողովուրդը որի վերայ ծանրացել է ազգային ապաքաղաքութեան հետեւանքը։ Անմբեխիծար տխրութիւն է ձգել միշտ իմ սրտի վերայ մտածութիւնը. թէ աշխարհի երեսին գտնված ամենայն ազգի մէջ հասարակ ժողովուրդը ենթարկվում է աւելի ծանր զրկողութիւնների եւ տառապանքի,

մինչ խորտակուած էր նորա ազգութեան մեքենան, քան թէ մանաւոր մարդիկ, այո՛, մեծատունք եւ մատնիչք. սորա հակառակ, ամենափոքր երջանկութիւնը վայելում է հասարակ ժողովուրդը, մինչեւ անգամ, երբ ներգործում էր ազգութեան մեքենան, քան թէ մասնաւոր մարդիկ, որ գուրս գալով հասարակաց շրջանից բարձրացել էին հորիզոնից։

Այս բանի պատճառները քննել եւ բերել յիշատակարանիս մէջ, չունինք համարձակութիւն։ Հարկադրվում ենք այսքան միայն ասել, որ հին բարոյական աշխարհի եւ հին խելքերի դրութիւնքը չէին կարող այլ հետեւանք դուրս գնել։

Ազգային չինութիւնը. բնական կերպով, պիտի յառաջանայ ցածից – հիմքից. այդ հիմքը է հասարակ ժողովուրդը. Այն մարդը, որ սիրում է իւր ազգը, որ նուիրում է իւր անձը ազգի բարոյական սպասաւորութեան պարտական է ծառայել ոչ ազգի կուռքերին, այլ հասարակ ժողովրդի օգտին։ Հասարակ ժողովրդից կազմվում է ազգութեան մեքենան, լուսաւոր մարդիկ կարող են, եւ պարտական են միայն ուղղութիւն, զարկ եւ ընթացք տալ այդ մեքենային։

Մեր ազգութեան մեքենան ջարդված է։

Անմտութիւն էր, եթէ մտածէինք զարկ տալ մեքենային, մինչ նա խորտակուած եւ նորա գործարանքը ցիր ու ցան ու ժանգոտած չունէր այն ամբողջութիւնը ու կազմութիւնը, որ կարողանար շարժվիլ եւ գործ կատարել։ Ազգութեան մեքենայի – հասարակ ժողովրդի վերանորոգութիւնը հնարաւոր է միայն գիտակցութիւն մտկելով նորա մէջ։ իսկ գիտակցութիւնը բղխում է լուսաւորութիւնից։

Լուսաւորութիւն. ահա մի մեծ եւ հոյակապ խնդիր, որ ազգի կարողքը եւ ուսումնականքը պարտական են լուծանել, չկայ աշխարհի երեսին մի այնպիսի բան, որ ահարկու լինէր խաւարից. սա մի զարհուրելի վարագոյր է, որի տակ իրաւունք ունին մարդիկ եւ մահ ենթադրել։ Ազգը լուսաւորելու գաղաբարը այն ժամանակ միայն կարող է իրագործվել երբ հիմնած ու պահպանուած էին բուն ազգային դպրոցներ, որոնց մէջ պիտի լսվեր Հայկական խօսքը, ուր հայոց բառերով ներս պիտի մտանէին ազգի զաւակների մէջ զանազան լուսաւոր գաղափարքա Ազգային չենք ճանաչում այն դպրոցը ուր հրամայվում է խօսել Ռուսերէն, Ֆրանսիարէն, սակա՝ Եբբէն հայերէն դպրոցի ազգայնութիւնը կախուած չէ աշակերտների եւ վարժապետների լոկ Հայութիւնից, լեզուն է, որ միմիայն կարող է այդ վերնագիրը դնել դպրոցի ճակատին։ Անհիմն եւ ամենայն ընդունելութեան անարժան պատճառ է, թէ օտար լեզուներ խօսեցնելով ազգի զաւակներին, պիտի վարժեցնէին նորան այդ լեզուների մէջ. առաջին հարկաւոր բանը չէ. որ ազգի զաւակը ուսանի օտար լեզուներ, գորա հակառակ, պարտական է նա քաջանալ իւր լեզուի մէջ։

Հայերը դեռ խօսել չ'գիտեն, թող ուրեմն Հայ մանուկը, նախ եւ առաջ որպէս հայի զաւակ ուսանի իւր սեպհական լեզուն եւ ապա օտարինը։

Ազգութիւնը առաջ է քան թէ մարդկութիւնը, եւ ամենայն մարդ իւր ազգութեամբ մտանում է ընդհանուր մարդկութեան մէջ։ Սուտ է այն լուսաւորութիւնը որ պիտի լինի օտարի լեզուով. սորա վկայող դառն փորձեր շատ անգամ կատարել է մարդկութիւնը։ Ազգի հոգին եւ ազգի սիրտը կարող են իւրեանց յատկութիւնքը եւ որակութիւնը մաքուր պահել միմիայն կերպարանագործվելով ազգային լեզուի ազդեցութեան տակ. այս ճշմարտութիւնս ուրացողը, ուրացող է ազգութեան։

Դպրոցի օգուտը պիտի հետեւի նորա ուղղութիւնից, առանց խղճի եւ մտքի ազատութեան չ'կայ մտքի լուսաւորութիւն։

Ազգի դպրոցը է այն գործարանը, այն արգանդը, որ յղանում է ազգի գալոց սերունդը, ինչպէս բնական աշխարհի մէջ ծնածը պահում է իւր ծնողի տիպը եւ բնական որակութիւնքը, այնպէս եւ աշակերտը կրում է իւր վերայ դպրոցի դրոշմը։ Կառավարիչքը կամ դաստիարակքը դպրոցների, որ, չը պահպանելով ազգի օգուտը չարաչար էին գործ դնում իւրեանց պաշտօնատարութիւնը, յանցաւոր են լինում ազգի առաջեւ, եւ այս յանցանքի գաղափարը միմիայն կարող է բացատրել այս զարհուրելի բառը ազգասպանութիւն։

Եթէ դպրոցի խորհուրդը եւ նպատակը համաձայն չէ ազգի էական օգուտներին, եթէ նա մի մեքենայ է, Հայի զաւակի մէջ օտարութիւն պատուաստելու, լաւ է մանուկներին տգէտ Հայ մնալ, քան թէ դառնալ թերակիրթ ՀՀայ։

Բայց մեր ազգի դրութիւնը այնպէս է, որ նա չէ կարող իւր ներկայ աւերանքի մէջ պատրաստել այնպիսի դպրոցք, որ կարող էին տիեզերական կրթութիւն տալ ազգի զաւակներին. սոքա հարկաւորուած պիտի դիմեն օտարի դպրոցը եւ այն տեղ ուսանին։ Այո՛, այս իրողութիւն է, բայց ազգային դպրոցները պարտաւոր են բանալ մանուկների միտքը, պինդ մտկել նոցա մէջ ազգութեան սերմը վառել նոցա սրտում Հայութեան կրակը, մի խօսքով կատարել այն ընտանեկան պարտականութիւնը, որ ծնողք պիտի կատարեն իւրեանց ազգի օգտի համար, եւ որ մնացած է երեսի վերայ ընտանեկան դաստիարակութիւն չը լինելուց մեր մէջ։

Ընտանեկան կամ մայրենի դաստիարակութեան մէջ է ազգի ապագայ սերմը, բայց մեր ազգի մայրերը տալիս են ազգին կեղեւով միայն հայ զաւակներ։

Հայ կանա՛յք, ձեր պէս չէին ձեր մայրերը, նոցա սիրտ զարկում էր ազգութեան համար, ազգին հասած հարուածներին քաջութեամբ մասնակից եղան նոքա, իւրեանց ամուսինների հետ միասին։ Նոքա չ'ուրացան ազգի օգուտները, նոքա այրութիւն ցոյց տուեցին իւրեանց կանացի կերպարանքի տակ եւ երբէք չը կամեցան, որ նայէին նոցա վերայ, որպէս մի խաղալիկի, որպէս մի հագնված զուգնված պաճուճապատանքի վերայ։ Հինգերորդ դարում, երբ Հայոց ընտիր որդիքը զոհ գնացին պարսկական վիշապին, նոցա մայրերը, կանայքը, քոյրերը եւ դստերքը պակաս չերեւցան այն քաջերից, որ ազգի պահպանութեան համար քաջութեամբ ընկան պատերազմի դաշտումը, նոքա մոռացան իւրեանց կանացի տկարութիւնը, իւրեանց փափկանունդ կեանքը. դուրս եկան իւրեանց փառահեղ բնակարաններից եւ պարզ երկնքի

տակ, գետնի վերայ տարածվելով չարչարակից գանվեցան առաքինի զինուորներն։ Ինքեանք հոգացին իւրեանց պիտոյքը եւ աղախիններից չը պաշտուեցան. մարդ չը կար նոցա ձեռքին ջուր ածող կամ այն պարզ կերակուրը եփող, որով ապրում էին, իւրեանց ձեռքի արուեստով կերակրուեցան նոքա եւ տերութենից նշանակված ռոճիկը ամբողջ հասուցին իւրեանց ազամարդերին, փեւչոտվեցան եւ ծխոտվեցան սենեակները եւ առագաստները նորահարսերի եւ նարդի ոստայն պատեց նոցա նախկին շքեղութեան վերայ։

Շատ ձմեռներ անցան՝ շատ գարուններ եկան, նոցա հետ միասին եւ գարնան ծիծեռնակներ, բայց նոցա արզամարդիկը յետ չը դարձան. նոքա իւրեանց արիութիւնը նախատինք չը համարեցին ինքեանց, այլ մանաւանդ պարծանք, առաքինի ժուժկալութեամբ հարմանալով երկնաւոր անմահ փեսային։ Այսպէս էին մեր հին մայրերը եւ քոյրերը, այսպէս էին մեր կանայքը, բայց ինչ՞ մնաց այն օրից. . . . ։

Հայ կանայք, ձեր հետ է այսօր իմ խօսքը, ազգի վերանորոգութիւնը փրկութիւնը լոկ երազ է, եթէ փտած է այդ ազգի ընտանեկան կեանքը։ Տէրութիւնը բաղկանում է ընտանիքներից եւ սոցա որակութիւնը ոչ թէ մի այն ցոլանում է կառավարութեան վերայ, այլ մեծապէս պատճառ է նորա ապահովութեան կամ կործանութեան։

Մեր ընտանեկան կեանքը նման է մի կեանքի, որ մի միայն կարելի էր անցուցանել պանդոկներում։ Մեր ընտանիքների մէջ լսված խօսքերը են կերակրի, հանդերձի, զբօսանքի եւ այլ զուարճութիւնների խօսքեր, եւ շատ անգամ այս տգայական բաները հերիք պատճառ են լինում ընտանիքների կարծեցեալ երջանկութիւնը եւս խանգարելու։

Ու՞ր է այն ընտանիքը, կամ աւելի լաւ, այն մայրը, որ մօր պէս խօսում էր իւր զաւակների հետ, մենք չը տեսանք դեռ եւս, եւ չը տեսնելու պատճառը այն է, որ մեր կանայք կորուսել են իւրեանց խորհուրդը։ Մայրը պիտի ուսուցանէ իւր զաւակներին ազգային լեզուն, մայրը պիտի տնկէ տգայական սրտերի մէջ ազգութեան սերմը այնպիսի խնամով եւ հոգածութեամբ, որ հիւսիսի ցրտաբեր մրրիկը կամ հարաւի այրող տօթը չը կարողանային չորացնել նորանից ծլելու բոյսը։ Զաւակների մայրը է գերդաստանի մայր, իսկ գերդաստանի մայրերը ազգի մայրն են։ Բայց ինչպէ՞ս են մեր ազգի մայրերը ներկայումս, արդեօք իւրեանց կեանքի մի օր, մի ժամ, մի վայրկեան մտածում են իւրեանց զաւակների մասին բարոյապէս, մենք պատասխանում ենք, ո՛չ։

Նոքա դեռ նոր աշխարհ բերած մանուկը, ըստ մեծի մասին յանձնում են օտարազգի դայեակների։ Հայի զաւակը աճում է օտարի կաթով, օտարի լեզուն եւ հոգին ներս է մտանում նորա մէջ այն կաթի հետ, որուբը չէ մեզ։ Հայ տիկինը ամօթ է համարում ինքեան ծիծ տալ իւր զաւակին, ինչպէ՞ս կարելի է, որ նա երախայի պատճառով յետ մնայ խրախճանքներից, պարահանդէսներից, եւ դիմակահանդէսներից. թո՛ղ երեխան ամէ ուրիշի հոգածութեամբ, եթէ Հայ չը լինի գոնէ մարդ կը լինի, եթէ Հայի կրօնը չ'իմանայ, գոնէ ուրիշինը կ'իմանայ։

Մեր շրթունքը այրվում էն այս խօսքերը կրկնելու ժամանակ, եւ զայրացած ամօթապարտվում ենք մեր խղճմտանքի առաջեւ, մտածելով, թէ՝ մինչեւ որ աստիճան աւերանքի եւ բարոյական զեղխութեան ընդունակ են դարձել մեր կանայքը։

Աւելորդ էր մի խօսք եւս ասել մայրաքաղաքներում գտանված Հայ կանանց մասին՝ նոքա՝ վաղ ուրեմն կորած են մեր համար, կո՛րած են եւ նոցա զաւակները։ Նոցա Հայութիւնը գուցէ երեւում է նորանից, որ տարին մի քանի անգամ գնում են հայոց եկեղեցի եւ մինչեւ անգամ խոստովանութիւնը եւս կատարում են օտարի լեզուով։ Մենք վերջացրել ենք մեր հաշիւը նոցա հետ. թողնում ենք, որ նոքա լողան իւրեանց քրինոլինների մէջ, մոլորութեան մի վիմից, միւս ապառաժին զարկվելով, այլ իրաւունք չենք համարում երես թեքել բոլոր հայոց ազգի կին մարդերից, որոնցից դեռ եւս յոյս ունինք. եւ սոցա վերայ սաստիկ զարկում է մեր սիրտը։

Հայ կանա՛յք, անցաւ այն ժամանակները. երբ մարդիկ նայում էին կանանց վերայ, որպէս ստրուկների վերայ։ Անցան այն ժամանակները երբ կանայք համարվում էին որպէս մի տպրանք, ինչ, կահ, կարասիք, գընելու կամ վաճառելու մի բան, անցան եւ յետ գալու չեն միւս անգամ այն ժամանակները, երբ օրէնք տուողները նայում էին կանանց վերայ. որպէս մի ծննդաբար գործարանի վերայ, որ զինուոր էր պատրաստում հայրենիքի համար։ Անցան այն ժամանակները, երբ կանայք համարվում էին սատանայ եւ երբեմն հրեշտակ, այժմ, այս մարդասէր դարում լուսաւորեալ աշխարհ նայում է կանանց վերայ, որպէս մարդու վերայ։ Նա ճանչել է այժմ այն մեծ եւ խորախորհուրդ պաշտօնը, որ վիճակել էր Աստուած կանանց ազգին լցուցանելու։

Հայ կանայք, դուք որչափ եւս նոր ժամանակների ծնունդ, այնու ամենայնիւ դուստր կամ թոռներ էք այն մեծահոգի եւ ինկելի քաջ Արմենուհիների, որոնց մասին մի փոքր վերեւում խօսեցինք, մեծ եւ անմերժելի պարտականութիւն կայ ձեր վերայ նմանել նոցա եւ հասկընալ ձեր խորհուրդը։ Դուք ստեղծուած չէք, որ մի միայն հագվիք, ուտէք, խմեք, ու քնէք այլ պարտական էք մայրութիւն ստանել եւ ձեր Հայութիւնը երեւցնել ձեր զաւակների մէջ, մենք անմահ ենք մեր զաւակներով, ինչպէս մեր նախնիքը կենդանի են մեզանով։ Ցիշեցէք ձեր ազգութիւնը, ձեր զաւակների գալոց օրերը, յիշեցէք ձեր հին մայրերի քաջածները եւ աշխատեցէք Հայեր տալ մեզ, ինչպէս ձեր նախնի մայրերը աշխատում էին։ Ձեր ցանկութիւնից եւ աշխատութիւնից կախվում է ծաղկեցնել եւ փառաւորել այն, որ հազարների արիւնով եւ բիւրերի տրտասուքով պահվել է մինչեւ այժմ, նոյնպէս ձեր ծուլութիւնից, անհոգութիւնից եւ չը Հայութիւնից է կախվում. որ ուռնայնանան մեր հօրերի եւ մօրերի քաջածները եւ մենք բոլորեքեան անյայտանանք որպէս մի կաթիլ ջուր ահագին ծովի մէջ։

Հայ կանայք, մեր ազգը աւերուել է այժմ, նորան պիտոյ է վերանորոգել, նա թմրել է մի խոր քունով, նորան պիտոյ է զարթեցնել՝ բայց այս երկու դիպուածում եւս ամենայն ջանք եւ աշխատութիւնք զուր կ'երթան

եթէ դուք չը մերկանաք ձեր վերայից անհոգութեան դատապարտելի քօղը, եթէ դուք չը հագնէք հայութիւնը, ա՛չ որպէս քրիստոնէին, այլ որպէս գոյն ձեր մարմնի, որ ոչ ինչ բան չեր կարող քերել հանել իւր վերայից։

Ամենայն ուսումն եւ զիտութիւն, դպրոցներում աւանդված, ուշացած են եւ դժուարաւ կը ներգործեն ձեր զաւակների վերայ. եթէ նոքա ստացած չէին ձեզանից մի ընդունական դասակարգութիւն։

Զենք պահանջում ձեզանից այն ընտանեկան դասակարգութիւնը, որ պահանջելի էր Եւրոպացի կանանցից, առ ժամս, մինչեւ մեր ազգի նոր մայրերը, հերիք է մեզ եւ շատ շնորհակալ կը լինինք, եթէ դուք ձեր Հայկական խստակ կաթի հետ դուք ձեր զաւակներին նախ մեր լեզուն, երկրորդ, հոգւով եւ սրտով Հայութիւն, եւ երրորդ անձնազոհ սէր դէպի ազգութիւնը. դէպի մեր ազատ կրօնը։

Աշխարհը առաջ է գնում, վերատին ծագում են թառամած ազգութիւնք, եւ մեզ արժան է անհոգ չը լինել այն պարծանքի մասին որ սաղմանուած է Հայութեանը մարդկութեան մէջ։ Հայերը պարտական են լուսաւորվիլ եւ գործիք լինել նախախնամութեան ձեռքում, Ասիական ազգերի մէջ լուսաւորութիւն տարածելու։

Հայ կանայք, մինչեւ այժմ ձեր աղջիկների մասին ձեր հոգաբարձութիւնը այն է եղել միայն, որ պահէք, մեծացնէք, պայծառ եւ փառաւոր զգեստներով զարդարէք եւ կօրէրէ ու էրէնուլնէ հարուստ պաշարներով օր առաջ ամուսնացնէք նորանց որ քան կարելի է մի հարուստ մարդու հետ։ Շատ այն է եղել, որ ուշադրութիւն դարձուցած չէք փեսայացուի հատկին, բարոյականութեան, խելքի եւ բանականութեան վերայ, թողունք որ շատ անգամ ձեր աղջիկը ոչ թէ միայն չէ սիրել իւր փեսայացուն, այլ և տեսանել չէ կամեցել այն հարուստ, բայց անհաւանելի փեսայացուի երեսը։ Այս չէր ձեր մայրենի պարտականութիւնը, դուք ձեր աղջիկներից պիտի նոր մայրեր պատրաստէք դաստիարակութեան համար, դուք, ձեր աղջիկների մէջ պարտական էք տնկել և մնուցանել ազգութեան տունկը և ծնողական սուրբ իրաւունքներով պարտք դնել նոցա վերայ, նոյնը աւելի աճեցուցած տալ իւրեանց զաւակներին։ Ցդաների մասին ևս աւելի լաւ չէ եղել ձեր հոգաբարձութիւնը, նոքա ազգի և ազգութեան անունը անգամ չը լսած ձեզանից դուրս են եկել նիւթականութեան ծառայելու։ Դուք պարտական էք նոր հայուհի պատրաստել նոցանից, և ազգութիւնը, լեզուն և կրօնը յանձնել նոցա. որպէս մի սրբազան և անկողոպտելի աւանդ կտակելով, որ տանապատիկ շահեցուցած յետ ասն այդ նուիրական աւանդը իւրեանց զաւակներին։

Հայ կանայք, մեր ազգը մինչեւ այժմ ապրել է ազգերի խեղճութեան մէջ. նա մոխիր է կերած հայի տեղ և նորա խմելիքը խառնված է եղած արտասուքով։ Բռնակալութեան մուրճերը, այնպէս սաստիկ ջարդել են մեր ազգը, որ մինչեւ այսօր չէ կարողանում զգաստանալ իւր ուշամտի վիճակից. քնել իւր անձը, քնելը իւր անցածը իւր ներկան և հոգալ ապագայի մասին։ Այս է գլխաւոր պատճառը, որ ամենայն թշուառ վիճակ տանելի է եղել մեր խեղճ ու քարտուքանթ ազգին, նա երկար ժամանակ սովորելով այդ պիսի դառն բաժակների. մոռացել է աւելի լաւը որոնելու գաղափարը։ Ներկայումս, աշխարհի լուսաւորութիւնը, օրէ օր թուլացնում է սաղարի ազգերի կերած ծեծերի սատակութիւնը, այս դարու մարդասէր հոգին՝ դարմանում է նոցա վերքերը, և բռնելով ցանկացողի ձեռքից հանում է ցեխից և ապականութիւնից դէպ՝ի վեր, դէպ՝ի մի էրէնէկ կեանք։

Մեր ազգը վաղուց մոռացել է ցանկանալ. այ՛ո նա ունեցել է և ունի այս զգայողութիւնը, բայց մի միայն ոսկու և արծաթի վերարերութեամբ. դորա հակառակ մի բարոյական պարծանքի գաղափար. մի ընդհանուր ազգային հիւանդութեան գաղափար նորա մտքով ևս չէ անցել։ Մեզ մնում է ցանկանալ այդ Աստուածատուր գաղափարին, իսկ թէ չը յաջողի մեզ իրագործել. այն ժամանակ մեզ յաջողիք պատրաստել և ուխտելով նղով առնել որ նոքա աշխատին իրագործել զայն, անդրդուելի հոգով ու ցանկութեամբ, ինչպէս երբեմն Մովսէս ցանկանում էր հանել Աստուծոյ ժողովուրդը Աւեստաց երկիրը։

Հայ կանայք, դուք, ինչպէս և բոլոր արարածք. մահկանացու էք, յիշատակ չեն, քեզ փառք չեն ձեր վայլուն զոհարները կամ ուռած էրէնուլնները ձեր պարծանքը և յիշատակը են ձեր զաւակները։ Նոցա ձեռքով, և նոցա արժանաւորութեամբ պիտի փառաւորվին և անմահանան ձեր անունները սարա հակառակ, նոցա անարժանութեամբ պիտի մեռանին և ոչնչանան։

Երանի թէ լսելի լինէր ցեղ իմ ձայնը, երանի թէ մի քանի զոհ փրկէին իմ այս արտասուախառն խօսքերը, որքան պիտի մխիթարուէի ես, յոյսիս արևը մի գրկաչափ աւելի պիտի բարձրանար ազգային փրկութեան հորիզոնին վերայ։

Բայց ներկայումս, կրկնում ենք, մինչդեռ չը կայ դեռ ևս մէջ տեղում ընտանեկան կամ մայրենի դասակարգութիւն, այս պատճառով, ազգային դպրոցք պարտաւոր են կատարել այս պաշտօնը քընքուշ խնամով։

Մեր ազգին հարկաւոր է ընդհանուր լուսաւորութիւն, որպէս զի ազգը գիտակցութիւն ստանայ այս կամ այն մասնաւոր դիտութիւնք չունին այն խորհուրդը, ինչպէս մտածում են ոմանք։ Հայոց ազգը շատ տեղ գրել կարդալ չը գիտէ, շատ տեղ կորած է մինչեւ անգամ և լեզուն այս պատճառների հիման վերայ, առաջին փոյթը պէտք է

լինի, նախ և առաջ կենդանացնել մայրենի լեզուն ազգի զաւակների սրտի, հոգու և բերանի մէջ. անհետացնել մեր միջից Թուրքերէնը, Մոլոկաներէնը, վրացերէնը, կամ ուրիշները որ բռնել են ազգային լեզուի տեղը։

Հայաստանի բոլոր գիւղերում և քաղաքներում հաստատել պարզ դպրոցներ, որոց պաշտօնը լինի լեզու և գիր ուսուցանել Հայոց զաւակներին, այն պիսի տեղերում, ուր ժողովրդի չքաւորութիւնը արգելառիթ էայս գաղափարի իրագործութեան...։

Անգ լիայի պէս հզոր և լուսաւոր տերութեան մէջ գիւղական քահանան զրկվում է իւր ծուխից եթէ յանկարծ մի ողջ կամ աղջիկ երևէր նորա ժողովրդի մէջ, որ գրել կարդալ չը գիտէր։ Քահանան ունի իւր ծուխի ցուցակը, նա գիտէ թէ որ գերդաստանի մէջ քանի զաւակ կայ, և եթէ ծընողք չը կամենան իւր ժամանակին ուղարկել իւրեանց զաւակը, սա՛ իրաւունք ունի դատաւորի ձեռքով պահանջել։

Անտարակոյս, մի միայն Հայոց լեզու ուսանելը մի մեծ բան չէ, և դորանով դեռ ազգը չը լուսաւորեցինք, եթէ հասանէինք հս այդ նպատակին, բայց դա՛ այն առաջին աստիճան է լուսաւորութեան սանդուղքի, որի վերայ չը կոխած, չէ կարելի հետևեալները կոխել։

Մեր ազգի մէջ ոչ ինչ չը կայ, ամենայն բան հարկաւոր է նորից սկսանել. բայց թող չը վհատվին փոքրոգի մարդիկ թէ բան չը լինելով, այժմէն իսկ կորած էին Հայերը, ոչ, նոքա կորած չեն այլ միայն գտանվում են այնպիսի չար ճանապարհի վերայ, որի վերջը կորուստ է։

Մարդկութիւնը մի խմորված վիճակի մէջ գըտանվում է ներկայումս, մարդկութեան մէջ երևում է մեծ գործունէութիւն, մեծ շարժողութիւն. և այն ազգը, որ չը կամենար ինքնուրոյնաբար շարժվիլ և գործ կատարել կուլ կ'երթայ մի ուրիշ աւելի գործունեայ և խելացի ազգութեան. ասացինք, ով ականջ ունի թող լսէ։

Մի կողմից քահանաներից պահանջելով ազգի զաւակներին գրել կարդալ ուսուցանել, միւս կողմից անհրաժեշտ են ազգային օրինաւոր դպրոցների հիմնարկութիւնք։ Բայց այս բոպէիս. ինչպէս կարող են հիմնվել այդ դպրոցքը, մինչ ոչ արծաթագլուխ կայ և ոչ վարժապետ։

Այս ևս մի ահաւոր խնդիր է. որի լուծումը որքան դժուարին և անհնարին է երևվում շատերին, դորա հակառակ մեզ շատ հեշտ։ Այս տեղ հարկաւոր է ազգի կամքը. եթէ սա չէ մեռել, կամ չէ դադարել ներգործելուց, և արծաթը կը կանաչի, և դաստիարակներ կ'երևին։ Ցարակայս չը կայ, որ այսպիսի դիպուածներում հարկաւոր նե վճռական հնարներ, կիսակատար հնարները ոչ թէ միայն չեն հասուցանում այս նպատակին, այլ մեծապէս վնասակար են և՛ նիւթական և՛ բարոյական կողմից։»

Թէ ներկայ յօդուածի. և թէ նախորդ մեր գրածների մասին կարծում ենք որ ուրիշ ատեն առիթ պիտի գայ կրկին խօսելու «Դանուբը» ընթերցողների հետ. միայն այժմս այսքանը ասում ենք որ, մտանաւոր և եզակի մարդիկ որոնք երևան են եկել այլ և այլ ժամանակներում և ուրոնք զանազանուելով միւս հասարակ մահկանացուներից մի որոշ տեղ բռնել են պատմութիւն ըսուած գրքի մէջ. դորան պատճառը ուրիշ բան չէ եղել. բայց եթէ այն որ նոցա գործքերը. նոցա խօսածները ժամանակի փոփոխութեանց հետ չեն կորուսած և իւրեանց ոյժը. ապաւորութիւնքը. այլ միշտ մնացել են միևնոյն թարմութեանը մէջ. և պահել են իրենց առողջ և վսեմ գաղափարի ճշմարտիութիւնները. ահա և այս մտքով մենք մեր առինք ներկայ յօդուածը և ուզեցինք երկրորդել և ցոյց տալ մեր Ռումենահայ և Պուլկարահայ եղբայրներին ու քոյրերին, որ տեղ տարաբաղդաբար հայերէն լեզուն համարեա հոգևարք գրութեան մէջ է գտանվում, կորսուել է բոլորովին կամ հարիւրերորդ տեղն է բռնում մինչև անգամ պատահելիս են այնպիսի պարոններ որոնք գիտենալով հանդերձ իրանց համար ամօթ են համարում մեր խնկելի նախնիքների նուիրական բառբառը։ Ազգային լեզուի անտարանձախնդիրներին մենք յանձնում ենք „Կոմս Լամմանուէլի — Մ. Նալպանդեանցի„ դաստաստանին. որը մարտիրոսվել է գաղափարի սեղանի վերայ. խնկել է ազգային ապաւորութեան փշուտ ճանապարհին մէջ. սակայն իւր անմահ ու անմոռաց անունի հետ իւր հայրենասէր ոգին և ազգաշահ գաղափարները կենդանի բառբառով խօսում են այսօր մեզ հետ։ Իսկ մենք ասում ենք. ով որ հայերէն չը գիտէր. չը գիտէ նաև հայերէն մտածելը։ Ինչ մայր, որ չի ուսուցանում իւր զաւակաց ԱՍՏՈՒԱԾՍԻՐՈՒԹԻՒՆ.

ԱԶԳԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ.

Նա մայր չէ, այլ հրեշ է և որդեսպան։

Ինչ դպրոց որ չը ներշնչեր հայ աշակերտին հայ դաստիարակութիւն, ազգային չէ և ազգասպան է։ Ինչ դաստիարակ, և ինչ վարժապետ, որ չի պատրաստում հայ մանուկին ինչպէս հայ և հայութեան անդամ. նա դաւաճան է, նորա ազգից ստացած ռոճիկը, կերած հացը արիւն ու թարախ է։ Վերջապէս ինչ մարդ մի որ և իցէ եղանակով չի սպասաւորում, իւրա ազգին և օգտակար չի հանդիսանում զինքը ծնող մարդկութեան իւրա սեպհական հայրենիքին նա մարդ չէ, նա ազգային պաշտպանութիւնից զուրկ պարզապէս յարդ ու գարի ծամող գրաստ մէ ուկերաձուկ, կամ արծաթաշաղակ։

ՎԷՏԷՐԱՆ

ՏԷՐ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ Մ. Ս. ԹԻԽԹԻՒՆՃԻԷՖ

Скоро-печятницата на Спиро Гулабчъв